ԿԱՐԾԻՔ

ԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՔԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ԱԴՐԲԵՋԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԷԹՆՈՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գիտական խորհրդի մնծարգո նախագահ և հարգարժան անդամներ

Հրապարակային պաշտպանության է ներկայացված ուշագրավ և մի շարք առումներով արժեքավոր ատենախոսություն: Սկզբից ևեթ նշենք, որ թեմայի գիտական ուսումնասիրությունն այսօր ունի արդիական, առավել ևս քաղաքական կարևոր նշանակություն: Այս առումով հետազոտվող թեմայի արդիականությունը պայմանավորվում է ոչ միայն պատմագիտական տեսանկյունից, այլև ադրբեջանական կեղծարարների կողմից Արևելյան Այսրկովկասի պատմության խեղաթյուրումներին պատասխանելու անհրաժեշտությամբ: Այս համատեքստում արձանագրենք, որ հետխորհրդային Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչության և նոր թափ տուացած պատմաշինարարության պայմաններում Ադրբեջանը միլիոնավոր դոլլարներ է ծախսում պատմության կեղծարարությամբ ապատեղեկատվություն տարածելու համար: Գործի դնելով կեղծարարության իրենց բարդագամբենան (պատմական աղբյուրների տվյալների անսքող խեղաթյուրում, սկզբնաղբյուրների հրատարակության հատուածների դուրսնետում, բնագրերի զավեշտալի փոփոխություն և եզրութաբանության աղճատում, հիմնազուրկ պնդումների տարափնկր և այլն), ադրբեջանցի «պատմաբանները» անցնել են լայնածավալ տեղեկատվական հարձակման, որն էլ ավելի մեծ հետևողականությամբ սկսեց իրականացվել Ադրբեջանի անկախացումից և հատկապես Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերին թուրք-ադրբեջանական ցեղասպան դաշինքի սանձազերծած 44-օրյա լայնածավալ պատերազմից և Արցախի բռնագավթումից հետո:

Գիտական վերահսկողությունից դուրս հայտնված ադրբեջանցի կեղծարար «պատմաբանները», նրանց հետ սերտ աղերսների մեջ մտած, իրենց գրիչը վաճառքի հանած ադրբեջանահաճո ոդոշ գրչակներ, որոնք պատմությունը քննում են իրողությունների ապավառման Ադրբեջանի այսօրվա շահերի տեսակետից, պետական մակարդակով, հատկապես «Հեյդար Ալիև հիմնադրամ»-ի միջոցներով հրատարակված այսպես կոչված «աշխատություններով» ձեռնամուխ են եղել վաչկատուն թյուրալեզու մահմեդական եկվորների հիմքի վրա Արաքսից հյուսիս Արևելյան Այսրկովկասի քաղաքական բարտեզում 1918 թ. մայիսի վերջերին ի հայտ եկած «Ադրբեջան» տնաբույս կազմավորման «պատմությունը» հնացնելու և երևակայական անցյալ կերտելու անվիճառելի գործին: Ավելին, դեռևս հին քարեդարից «ադրբեջանցիներ», «ադրբեջանական ցեղեր» կամ «ադրբեջանական ռասա» փնտրելու մոլուցքով խելահեղ փորձ է արվում յուրացնել քաղաքակրթական և պետական ժառանգականության առումով որևէ աղերս չունեցող Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային և քաղաքական պատմությունը: Մինչդեռ, ընդդեմ հարևան ժողովուրդների պատմության, «համաթուրքականության և համաիսլամականության ֆորպոստ» «Ադրբեջան» նորագոյացությունը ինչպես իրավամբ դիպուկ բնորոշել է «Մշակ» օրաթերթը 1920 թ. 39-րդ համարում՝ «...մի յաւիտենական ամօթ և նախատինք էր մարդկութեան համար»:

Հարկավ, անցած տասնամյակների ընթացքում շատ բան է փոխվել: Պատմության գիրկն են անցել պարտադրված գնահատականները, կաղապարված, միակողմանի տեսակետները. ի հայտ են եկել խնդրո առարկա հիմնահարցի վրա լույս սփռող բազմաթիվ նոր նյութեր ու գաղտնազերծված արխիվային փաստաթղթեր: Եվ ինքնին առաջացել են նոր հարցադրումներ, որոնք հրամայաբար համապատասխան վերլուծություններ, համադրումներ ու ճշմարիտ պատասխաններ են պահանջում: Ուստի, այսօր, առավել ևս, հրամայական պահանջ է դարձել պատմական հավաստի փաստերի հենքի վրա հիմնովին ջախջախել պետական մակարդակով ուղղորդվող ադրբեջանցի կեղծարարների հնարովի «փաստերի» հիման վրա սարքած «տեսակետները»:

Այս առումով, Անուշ Հարությունյանի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել ադրբեջանական «պատմագրության» կեղծարարությունները, հավաստի փաստերի հենքով ներկայացնել արհեստածին «Ադրբեջանի» կազմավորման ստեղծման իրական պատմությունը և այլն: Հարկ է նշել, որ թեև մեզանում շատերն են իրենց հետազոտություններում անդրադարձել խնդրո առարկա թեմային, սակայն հիմնահարցի վերաբերյալ համապարփակ աշխատանք այդպես էլ չի իրականացվել. ուստի Ա. Հարությունյանի այս նախաձեռնությունը, որքան կարևոր է՝ հասունացած, նույնքան էլ գնահատելի: Ըստ այդմ, սույն ատենախոսությունն իր ողջ բովանդակությամբ, թեմայի ամբողջական պատմության հետազոտման առումով կարևորվում է որպես համակարգված ամփոփ աշխատություն: Ընդսմին, գալիս է լրացնելու տակավին 1960-ական թվականներից տխրահռչակ փոխ-ակադեմիկոս Զ. Բունիաթովով սկզբնավորված տարբեր ժամանակաշրջանների հիմնահարցերը պատմական իրականության անօրինակ խեղաթյուրող թուրք-ադրբեջանական հակագիտական հրապարակումների դեմ գրված հայ հեղինակների աշխատությունների շարքը: Ավելին, ատենախոսությունում բերված փաստերի ու վկայությունների հենքի վրա լիովին հերքվում են պատմական կեղծարարության և իրականության աղավաղումների միջոցով քաղաքական նպատակներ հետապնդող ադրբեջանցի կեղծարար հեղինակների և նրանց հետևող օտարազգի ծառայամիտ գրչակների ամոթալի խեղաթյուրումներն ու կեղծ թեզերը: Այս առումով սույն ատենախոսությունը գիտաքաղաքական տեսակետից մի հզոր ապտակ է ադրբեջանական կեղծարարությանը:

Աշխատանքը գրված է գիտական պատշաճ մակարդակով: Դա հատկապես դրսևորվում է թեմայի անմիջական խնդրի և ժամանակաշրջանի առնչությամբ՝ համակողմանի հիմնահարցերի ամբողջության մեջ հարցերը լուսաբանելու հեղինակի ցանկությունը: Արդյունքում՝ ստացվել է 4 գլխից, 10 ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից բաղկացած մի ինքնատիպ աշխատություն (ընդամենը՝ համակարգչային շարվածքի 195 էջ): Որպես հավելված ըստ ռուս ազգագրագետ պրոֆ. Միխայիլ Կրյուկովի առաջարկած էթնոսի կազմավորման սխեմայի տրված է «Ադրբեջանցիների էթնոգենեզը» սխեման, ինչն էլ ավելի է ամբողջացնում հետազոտությունը: Աշխատության յուրաքանչյուր գլխում շարադրված են խնդրո առարկա հարցերի հետ առնչվող հիմնական նյութն ու հեղինակի եզրակացությունները:

Ատենախոսությունը հագեցած է փաստական հարուստ տեղեկություններով, օգտագործված աղբյուրների և փաստաթղթերի քանակով, որը կարևոր է պատմական և քաղաքագիտական եզրահանգումների համար: Հեղինակը ջանադիր պրպտումների արդյունքում ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի, Հայաստանի պատմության թանգարանի, Ռուսաստանի Դաշնության պետական արխիվի և Սոցիալ-քաղաքական պատմության արխիվի համապատասխան ֆոնդերն ու թեմայի վերաբերյալ շրջանառության մեջ

դրել նոր նյութեր: Ատենախոսը հմտորեն օգտագործել է նաև հրատարակված փաստաթղթերի ժողովածուները, ժամանակի պարբերական մամուլը, ինչպես նաև թեմայի հետ առնչվող հրատարակված պատմագիտական գրականությունը:

Ներածական բաժնում հանգամանորեն հիմնավորված են ատենախոսության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, տրված են ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը: Ատենախոսը նոր նյութերի հիման վրա ընդհանուր գծերով բնութագրելով ուսումնասիրվող ժամանակահատվածի առանձնահատկությունները, լույս քննության է ենթարկել հարցի առնչությամբ լույս տեսած հեղինակների աշխատությունները: Ուշադրության է գրավում նաև եզրակացությունների և ընդհանրացումների բարձր որակը:

Ատենախոսության հաջորդող գլուխներում հեղինակը փաստերի տրամաբանությամբ հիմնականում քննության է առել հետևյալ առանցքային հիմնահարցերը. տրված են XIX դարում և XX դարի սկզբին Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդական բնակչության էթնիկ համախմբման ընթացքը, թաթար-հայկական ընդհարումները, Արևելյան Այսրկովկասում մահմեդական բնակչության շրջանում էթնիկական ինքնության դրսևորումները, մահմեդականության շրջանում ձևավորված քաղաքական հոսանքները և դրանց գաղափարաբանությունը: Քննվում են 1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը և նոսկ թվականի հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաղաքական իրադարձությունները, «Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ստեղծման» հիմնահարցերը. Բաքվի դեմ թուրքական արշավանքի նաչասակները, Բաքուն գավթելուց հետո հայ բնակչության նկատմամբ իրականացված կոտորածները: Ատենախոսը միանգամայն հիշում է մասնանշել, որ երիտթուրքերի մտահղացմամբ և օժանդակությամբ 1918 թ. մայիսի վերջերին ի հայտ եկած արհեստածին «Ադրբեջան» կազմավորումը, որը նույն անվան միջոցով հավակնում էր Ղարսակաստանի հյուսիսարևմտյան հինավուրց Ատրպատականն Ազարբայջան նահանգին, երբվ «...օտար թուրքական ինտերվենցիայի ողորմի արդյունքը»: Ուստի պատահական չէ, որ Երևանի ՀՅԴ «Յառաջ» օրաթերթը ծաղրածանակի թիրախ դարձնելով թուրքերի ցնկնած այդ կազմավորումը, վերջինիս տվել է հետևյալ անվանակ բնորոշումը «Շինգիզ-խան ծնաւ Լէնկ-Թէմուր, Լէնկ-Թէմուր ծնաւ Օսմանլի, Օսմանլին ծնաւ Ադրբէջան»:

Ատենախոսը նորահայտ արխիվային փաստաթղթերի և այլ սկզբնաղբյուրների հիման վրա ուսումնասիրվել է Ադրբեջանի խորհրդայնացման գործընթացը, և ապա դրան հաջորդած հակախորհրդային շարժումների պատմությունը: 1921 թ. գյուղատնտեսական և 1926 թ. համամիութենական մարդահամարների տվյալների հենքով ուսումնասիրվել են Ադրբեջանական ԽՍՀ բնակչության էթնիկ կազմը, մյուս էթնոսների բնութագրման և դրանց տարաբաժանման հիմքում ընկած խորհրդային մոտեցումներն ու մեթոդաբանությունը: Առանձնապես հետաքրքիր է 1920-ական թվականների խորհրդային ազգային քաղաքականությանը բնորոշ բնիկացման (կորենիզացիա), ուշադրավ են 1930-ական թվականների վերջերին «ադրբեջանցի» հորջորջված կովկասյան թաթարներին Ադրբեջանական ԽՍՀ-ում տիտղոսակիր բնակչություն անվանելու հարցերի մասին ատենախոսի հանգամանալից դիտարկումները:

Ատենախոսության եզրափակիչ մասում ձևակերպված են հիմնական եզրահանգումներն ու ընդհանրացումները: Հեղինակի հրատարակած հոդվածները, ինչպես նաև ատենախոսության սեղմագիրն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունում, սակայն, կան նաև որոշ թերություններ ու բացթողումներ, որոնց վրա հրավիրում ենք հեղինակի ուշադրությունը.

- Նախ՝ ատենախոսության վերնագրի և ժամանակագրության կապակցությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոսկ 1930-ական թվականների կեսերին կովկասյան թաթար հանրույթին արհեստականորեն շնորհված «ադրբեջանցի» նոր էթնանունը առավելապես կապված էր ոչ թե էթնիկ, այլ քաղաքական գործընթացների հետ, ինչը որ հանգամանորեն ներկայացրել է նաև ատենախոսը, ուստի վերնագրում տեղ գտած «ադրբեջանցի էթնոսի կազմավորման» բառակապակցությունը պետք է տրվեր չակերտների մեջ: Երկրորդ՝ գլխաբաժանումները կատարված են ժամանակագրական տրամաբանական ոչ ճիշտ եղանակով: Այսպես, թեև ատենախոսության ժամանակագրական շրջանակը սկսվում է «Ադրբեջանի ժողովրդական հանրապետության» ստեղծմամբ, ասել է թե՝ 1918 թ., սակայն ատենախոսության մեջ մեկ առանձին գլուխ՝ իր երեք ենթագլուխներով (շուրջ 36 էջ) ներկայացվում է Արևելյան Այսրկովկասում XIX դարում և XX դարասկզբին ընթացած էթնոքաղաքական գործընթացները: Մեր կարծիքով, ճիշտ կլիներ ատենախոսության թվագրման սկիզբը ընդգրկեր ոչ թե 1920, այլ 1918 թվականով: Այդ դեպքում ատենախոսության երկրորդ գլուխը համապատասխանաբար կդառնար առաջին, իսկ առաջին գլուխը կկազմեր նրա առաջին ենթագլուխը և այն էլ պետք է շարադրված լիներ համառոտ ակնարկով:
- Էջ 17-ում Հայոց Գանձակ քաղաքը նշված է փակագծում, իսկ օտարահունչ Գյանջան փակագծից դուրս, մինչդեռ պետք է նշվեր հակառակը:
- Խոսելով թաթար-հայկական ընդհարումների պատճառների մասին (էջ 31-34), ատենախոսն իրավամբ բախումների գլխավոր մեղավոր և կազմակերպիչ համարելով ցարական վարչակարգին, միևնույն ժամանակ անտեսում է այն հանգամանքը, որ ընդհարումների սանձազերծման գործում որոշակի դեր է խաղացել նաև այդ տարիներին Օսմանյան կայսրության կողմից Այսրկովկասում տարվող համաիսլամական և համաթյուրքական քարոզչությունը: Փաստերը վկայում են, որ Բաքու և Այսրկովկասի այլ քաղաքներ թափանցած թուրքական գործակալների առջև դրվել էր նաև հետևյալ խնդիրը. բորբոքել մահմեդականներին, և հայերի ջարդերը կազմակերպելու նպատակով կովկասյան թաթարներին հրահրել նրանց դեմ, միաժամանակ ազգամիջյան հակասությունները դարձնել «Մեծ Թուրանի» իրականացմանը խոչընդոտող ռուսական կայսրության թուլացման կարևորագույն միջոց: Երևանում լույս տեսնող ՀՅԴ Երևանի «Յառաջ» ամենօրյա պաշտոնաթերթը վկայակոչելով որոշ փաստեր Նախիջևանի գավառում համաիսլամականների ծավալած գործունեությունից, գրում էր. «Ընդհարումների պատճառներից մէկն էլ պանիսլամիզմն էր, որը գլխաւորապէս արտայայտւեց Նախիջեւանի գաւառում: Այնտեղի խաները գաղտնի յարաբերութիւնների մէջ էին զանազան խորհրդաւոր տարրերի հետ, այնտեղ էր, որ սկսեցին երեւալ «Ղազաւաթի» սիմբոլները՝ մարգարէի դրօշակը և կանաչ չալմաները. մօլլաները առանց քաշւելու ճառում էին, որ բոլոր քրիստոնեաները պիտի ջնջւեն, որ հասել է ռուս տիրապետութեան վերջը Կովկասում, և մօտ է խալիֆի (թրքաց սուլթանի) թագաւորութիւնը»: Ավելին, Օսմանյան կայսրության և ցարիզմի հակահայկական քաղաքականության ծրագրերի մասին է վկայում Ժնևից ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի կողմից, կուսակցության հիմնադիր երրորդության անդամ Ռոստոմի (Ստեփան Զորյան) ձեռամբ 1905 թ. հուլիսի 9-ին Կ. Պոլիս՝ Յուցական պատասխանատու մարմնին ուղարկած ծածկագիր նամակ-հրահանգը, որում ասվում էր. «Կովկասում ռուս կառավարութիւնը սկսել է տատանուել: Բացուել է տաճիկ կառավարութեան մի ծրագիր, որով հայերին կոտորելով, պիտի աշխատեն Անդրկովկասը գրաւել: Մի մասը (իմա՝ ռուսական իշխանության – Գ. Ս.) այն կարծիքին է, որ պէտք է այս պարագային հայերին զինել. միւս մասը աւելի նպատակայարմար է գտնում թողնել հայերին կոտորել. վստահ, որ վերջումը միեւնոյնն է, ռուսները կարողանալու են յետ նուաճել Անդրկովկասը»: Այսպիսով, ստեղծված նոր

իրադրության մեջ, համընկնան ցարական կառավարության և Բարձր Դռան քաղաքական շահերը: Տեղին է այստեղ մեջբերել Օսմանյան կայսրության և ցարիզմի հակահայ քաղաքականության վերաբերյալ Ա-Դոյի կողմից տրված ավելի որոշակի գնահատականը. «Ցարիզմ-սուլթանիզմ՝ մի հանճարեղ դաշինք, որի սլաքներն ուղղված էին հայերի դեմ»:

- էջ 60-ում անդրադառնալով Բաքվում 1918 թ. մարտի 18-ից (ն. տ. 31-ից)-մարտի 20-ը (ն. տ. ապրիլի 2-ը) «Մուսավաթ»-ի իշխանությունը բոլշևիկներից զավթելու նպատակով տեղի ունեցած եռօրյա ռազմական բախումների լուսաբանմանը, ատենախոսն անհրաժեշտաբար պետք է հստակ ընդգծեր, որ բոլոր այդ գործողությունները հրահրվում և ուղորդվում էին երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության կողմից: Թեև ատենախոսը խնդրո առարկա հարցի մանրամասն իրազեկման համար մատնանշել է Վ. Մելիքյանի «Պայքար Բաքվի համար (1917 թ. նոյեմբեր-1918 թ. ապրիլ)» (Երևան, 2018) աշխատությունը, այնուհանդերձ, պետք է ներկայացներ «Մուսավաթ»-ի վերջնանպատակը: Ինչպես փաստում են դեպքերի հետագա զարգացումները, «Մուսավաթ»-ը հետապնդում էր ոչ միայն Բաքվում զավթել իշխանությունը, այլև Շամխոր կայարանում հունվարի 9-13-ը ռուս զինվորների սպանդից հետո հայ բնակչության նկատմամբ ևս իրականացնել ցեղասպանական գործողություններ: Դեպքերի ժամանակակից և ականատես, Բաքվի Հայոց Ազգային խորհրդի քարտուղար Արտաշես Չիլինգարյանն (Ռուբեն Դարբինյան) այդ առիթով գրում էր. «Ու թէեւ մենք Դաշնակցականներս մեր գաղափարներով եւ քաղաքական ձգտումներով հակառակ էինք Խորհրդային իշխանութեան, բայց գտնուելով թրքական մահացու վտանգին ներքեւ՝ հարկադրուած էինք պայքար չմղել բոլշեւիկներուն դեմ... Մենք հոն (իմա՝ Բաքվում – Դ. Ս.) ունէինք միայն ինքնապաշտպանութեան խնդիրներ եւ այդ պատճառով ալ կաշխատէինք չէզոքութիւն պահել բոլշեւիկներու եւ թրքական Մուսաւաթի հանդէպ, որոնք արդէն խուլ պայքարի մէջ էին իրարու հետ: Սակայն շուտով պարզուեցաւ, որ մենք չպիտի կարողանանք պահել մեր նախասիրած չէզոքութիւնը: Նախ որ՝ բոլշեւիկները շատ տկար էին Բագուի մէջ, եւ անխուսափելի պիտի ըլլար անոնց պարտութիւնը թրքական Մուսաւաթէն, որ լաւ զինուած զօրացած էր տաճիկ զինուորական գերիներու շնորհիւ: Երկրորդ՝ բոլշեւիկներու պարտութենէն յետոյ, կասկած չկար, որ Մուսաւաթը պիտի հաշիւ մաքրէր հայերուս հետ»: Ի դեպ, հայ բնակչության դեմ ոճրագործություններ իրականացնելու գործում իր ակտիվ դերակատարությունն է ունեցել հատկապես, Բաքվի հայերի 1918 թ. սեպտեմբերյան եղեռնագործության գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ «Դիֆայի» անդամ Բեհբութ-խան Ջիվանշիրը, որն այդ նպատակով կազմել էր թաթարական զինված հրոսակախմբեր: Հայ նշանավոր բանասեր ու պատմաբան, հասարակական գործիչ Արշակ Ալպոյաճյանը Կ. Պոլսում լույս տեսնող «Վերջին լուր» օրաթերթում մուսավաթականների հակաիշխանական խռովության իրական նպատակների մասին փաստական հավաստի վկայությունների հիման վրա գրում է. «Ճիվանշիրի և իր արբանեակներուն խորհուրդով թաթար Ազգ.[ային] խորհուրդը, որ Պաքու հաստատուած էր, ամէն ճիգ կթափէր քաղաքին տիրանալու և անոր հայ և ռուս բնակչութիւնը ջնջելու համար: Այս նպատակով Ճիվանշիր կը կազմէր և կը մարզէր ոչ միայն Պաքուի իսլամները, այլ նաև հրոսախումբեր կը կազմէր Հիւսիսային իսլամ լեռնականներէն և Հարաւային իսլամներէն և երբ ինքզինքն բաւական զօրաւոր կզգար, պատերազմի կը մտնէր ռուս պոլշեւիկներու դէմ, հակառակ Հայոց երկու կուսակցութեանց մէջ խաղաղութիւնը պահելու բոլոր ճիգերուն»: Ըստ էության՝ 1905-1906 թթ. թաթար-հայկական ընդհարումներից հետո դեռևս չմեղմացած հարաբերությունների պայմաններում երկրորդ փորձն էր ձեռնարկվում հայկական ջարդեր կազմակերպելու համար, մասնավորապես մեխանիզմների ընտրության, ճշգրտման, մշակման և կիրառման առումով:
- Բաքվում 1918 թ. մայիսին տեղի ունեցած իրադարձություններից անմիջապես հետո ատենախոսն անդրադառնում է 1918 թ. փետրվարից իր աշխատանքները սկսած Անդրկովկասյան Սեյմին (էջ 61),

Մինչդեռ, ժամանակագրական առումով ճիշտ կլիներ այդ պարբերությունը տեղափոխել մարտյան իրադարձություններից առաջ:

➢ Անդրադառնալով Բաքվի դեմ 1918 թ. թուրքական արշավանքին և ռազմական գործողություններին (էջ 85-91), անհրաժեշտ էր մատնանշվեր Բաքվի հերոսամարտի կարևոր դերն ու նշանակությունը. քանզի Բաքու արշավող թուրքական զորքերի դեմ հիմնական կռվող ուժը Բաքվի Հայոց Ազգային խորհրդի և ՀՅԴ-ի տրամադրության տակ գտնվող հայ զինվորականությունն էր: Իրողությունն այն է, որ Բաքվի հայության 4-ամյա հերոսամարտի արդյունքում, մեծաթիվ զոհերի գնով, թուրքական զորամասերը մինչև սեպտեմբերի 15-ը գամված մնացին Բաքվի շրջանում, երբ Օսմանյան կայսրության անձնատվությանը հաշվված օրեր էին մնացել: Դրանով իսկ թուրքական զորքերը չկարողացան օգակել Հայաստանի Հանրապետությունը և իրագործել արևելահայությանը իսպառ բնաջնջելու ճանապարհով «Մեծ Այրբևջան» պետություն ստեղծելու համաթուրքական ծրագրերը: Կանխելով Արցախի, Սյունիքի ու Երևանի հանդեպ ծրագրավորվող թուրքական ագրեսիան Բաքվի հերոսամարտը վճռական դեր խաղաց նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետության պաշտպանության գործում:

➢ Առնեխոսության մեջ առանձին ենթագլխով, թեկուզև ընդհանուր գծերով, անհրաժեշտաբար պետք է ներկայացվեր հայ բնակչության նկատմամբ մուսավաթական կառավարության 1919-1920 թթ. իրականացրած կոտորածները, որվեին ցեղասպան քաղաքականությանը բնորոշ գնահատականներ: Մի քաղաքականություն, որ շարունակեց հեղափոխական սբեմ հագած Ադրբեջանական ԽՍՀ-ի դեկավարությունը, հանձին հակահայկական գործունեությամբ հայտնի Ռազմհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի:

Հայտնի է, որ Բաքվի հայերի 1918 թ. սեպտեմբերյան կոտորածները, որին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր, շատ ավելի մեծ արհավիրքի սանձագերծված ցեղասպանական գործողությունների տեղային այն նախօրինակն էր, որոնք առաջվել համակարգված ու մեծ թափով շարունակվեցին Կուրի ձախափնյակի ամբողջ հայաբնակ շրջաններով մեկ 1918-1920 թթ.: «Ադրբեջան» կազմավորումում ազգայնական համաճարակի անկասելի տարածումը, արտաքին աշխարհի լռության հանցագործությունը և սեփական անպատժելիության գիտակցությունը պետք է սնեին ու ծնեին մուսավաթականների հրեշավոր երևակայությունն ու ծրագիրը՝ ձեռնամուխ լինել բնաջնջելու հայությանը՝ այս անգամ ամբողջ Արևելյան Այսրկովկասի սահմաններում Շամսխի, Գյոքչայի, Նուխիի, Արեշի գավառներում, Զանգեզուրում և Բաքու քաղաքներում: Այս ոճրագործությունների պերճախոս վկայություններն են ստորև բերվող հետևյալ թվական տվյալները: Այսպես, ընդհանուր առմամբ միայն Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառների 50.000-ից ավելի հայերից կոտորածի ենթարկվեց շուրջ 40.000-ը: 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպված կոտորածների հետևանքով միայն Նիժ, Վարդաշեն և Ճալեթ գյուղերում զոհ գնացին շուրջ 500 հայ և քրիստոնյա ուղի: Այսպիսով՝ ինչն ակներև է ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումով, այն ամենը, ինչ տեղի է ունեցել արևելահայության, մասնավորապես Կուրի ձախափնյակի հայության հետ 1918-1920 թթ., անառարկելիորեն փաստում են, որ կատարված ցեղասպանություն էր: Հատկանշական է, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտթուրքերն իրագործեցին հայերի բնաջնջումը Արևմտյան Հայաստանում: Ուստի, երիտթուրք-մուսավաթականների կիրառած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն և բաղկացուցիչ մաս. քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչև Բաքու) համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր: Թուրք-թաթարական ժանտախտի սարսափները այլաբանական դիպուկ ու խորիմաստ

բնութագրումներ են ձևակերպել «Հայ ժողովրդական կուսակցության» պաշտոնաթերթ «Ժողովրդի ձայն»-ի հրապարակումներում: Թերթը վերոնշյալ իրողությունները նկատի ունենալով իրավամբ գրում էր. **«Ադրբեջանը երկրորդ Տաճկաստանն է, Տաճկաստանից էլ վատթար իր քաղաքականութեամբ...»:**

- Ատենախոսության մեջ անհրաժեշտաբար պետք է անդրադարձ կատարվեր Փարիզում գտնվող Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշևի 1920 թ. նոյեմբերի 1-ին Ազգերի լիգա անդամակցության դիմումի և ապա 1920 թ. դեկտեմբերի 1-ին լիգայի «Հինգի կոմիտեի» որոշմամբ դիմումի մերժման հանգամանքներին: Իսկ մերժումը հիմնավորվում էր այն պատճառաբանությամբ, որ «Հարևան պետությունների հետ իր սահմանների հետ կապված վեճերի պատճառով անհնար է ճշգրիտ որոշել Ադրբեջանի ներկա յիս սահմանները»: Ընդսմին, Ազգերի լիգայի վերոբերյալ արդարացի որոշումով, մեկ անգամ ևս փաստվում է այն իրողությունը, որ ինքնահռչակ «Ադրբեջան» հորջորջվող կազմավորումը մուսավաթական կառավարության շրջանում (1918 թ. մայիսի 28-1920 թ. ապրիլի 28) չի ունեցել հստակ սահմաններ ու տարածք, միաժամանակ հավակնել է տիրել իր կողմից չվերահսկվող և իրեն չպատկանող տարածքների, մասնավորապես՝ ի բնե հայկական Արցախին, Զանգեզուրին ու Նախիջևանին:
- Ատենախոսությունը մեծապես կշահեր, եթե հեղինակը 1929-1930 թթ. Ադրբեջանում ներքաղաքական դրության վերաբերյալ, հատկապես Լ. Բերիայի առնչվող հարցերը քննարկելիս օգտագործեր "Политбюро и дело Берия (сборник документов), сост. Мозохин О., Попов А., под общей ред. О. Б. Мозохина, Москва, 2012" փաստաթղթերի ժողովածուն:

Անշուշտ, նշված դիտողությունները մասնակի են և չունեն սկզբունքային նշանակություն և բնավ ստվեր չեն ձգում աշխատության վրա: Ա. Հարությունյանի աշխատությունը վերջին շրջանում սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող հարուստ հիմքի վրա հիմնված ուսումնասիրություն է, որը նոր լույս է սփռում խնդրո առարկա հիմնահարցի լուսաբանման համար: Հանրագումարի բերելով ուսումնասիրության արդյունքները, պետք է արձանագրել, որ քննարկման ներկայացված ատենախոսությունն իր գիտատեսական և գաղափարաքաղաքական բովանդակությամբ ունի կարևոր այժմեական նշանակություն: Աշխատությունում հավաքված և օգտագործված է փաստագրական հսկայական նյութ, ինչը հնարավորություն է տվել հեղինակին ճիշտ լուսաբանելու և գնահատելու տեղի ունեցող իրադարձությունների պատմական ետնախորքը: Աշխատությունությունում ներկայացված դրույթները կարևոր են Արևելյան Այսրկովկասի պատմության ուսումնասիրման համար, ինչպես նաև կարող է օգտակար լինել ժամանակակից ադրբեջանական քարոզչամեքենայի կեղծարարություններին դիմակայելու խնդրում: Եվ ելնելով այդ նկատառումներից ցանկալի է, աշխատությունը հրատակված տեսնել նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Այսպիսով՝ հավաքած պատմագիտական ատաղձի ուսումնասիրությամբ, առատ փաստերի վերլուծությամբ և համադրմամբ ատենախոսը ստեղծել է հիմնահարցի վերաբերյալ ամբողջական աշխատանք: Ուստի, ԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՔԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «Ադրբեջանի ժողովրդական ու խորհրդային հանրապետությունների ստեղծումը և ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.» Է.00.02. «Համաշխարհային պատմագրություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը լիովին համապատասխանում է թվանիշին և մասնագիտությանը, ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող

պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոս պ.գ.դ., պրոֆ. Գ. Ստեփանյանի ատենագրությունը հաստատում եմ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտաքարտուղար, պ.գ.թ. դոցենտ Հ. Ղ. Մուրադյան

15. 12. 2023 թ.
ք. Երևան